

**Մարզպետի տեղակալ Լևոն Մարգսյանը մասնակցեց Վարազա Սուրբ Խաչի տոնին
28.09.2014**

Սեպտեմբերի 28-ին մարզպետի տեղակալ Լևոն Մարգսյանը Բերդի տարածաշրջանում գտնվող Նոր Վարազավանքում մասնակցեց Վարազա Սուրբ Խաչի տոնին: Այդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեծ հանդիսությամբ Վարազավան գյուղից մոտ 2 կմ հարավ-արևմուտք գտնվող Նոր Վարգավանքի վանքային համալիր տեղափոխվեց Քրիստոսի խաչափայտի մասունքը՝ հավատավոր ժողովրդի երկրպագության համար: Վարազավանքում մատուցվեց նաև Պատարագ Մովսես գյուղի քահանա Տեր Աբելի ձեռամբ: